

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



BIBLIOGRAPHY
OF THE NIKOLAY HOVHANNISYAN'S
PUBLISHED WORKS



ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

2003





NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

BIBLIOGRAPHY
OF THE NIKOLAY HOVHANNISYAN'S
PUBLISHED WORKS

*This was made possible by the
"Armen and Bersabe Jerejian Foundation Inc.", USA*

A
II
88855



Y E R E V A N 2 0 0 3

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

БИБЛИОГРАФИЯ
ОПУБЛИКОВАННЫХ ТРУДОВ
НИКОЛАЯ ОГАНЕСЯНА

*Издание осуществлено при поддержке
“Фонда Армен и Берсабэ Джереджян”, США*



Е Р Е В А Н 2 0 0 3

ԱՆՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մեկնաստորթյամբ
“Արմեն և Բերաարե Չերեջյան Հիմնադրամի”, ԱՄՆ

A II
88855



Ե Ր Ե Վ Ա Ն 2 0 0 3

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 01:941(479.25)
ԳՄԴ 91.9:63+63.3(2Հ)
Հ 854

Հ 854 Նիկոլայ Հովհաննիսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն:– Եր.: «Զանգակ-97», 2003, 88 էջ:

Մատենագիտությունն ընդգրկում է հեղինակի 1957–2003 թթ. հրատարակությունները՝ մենագրություններ, հոդվածներ և գրախոսականներ, որոշ բացթողումներով:

Հ 4406000000 2003 թ.
0003(01)–2003

ԳՄԴ 91.9:63+63.3(2Հ)

ISBN 99930–2–805–3

© Հովհաննիսյան Ն., 2003 թ.

ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա), “Արարատ” գիտությունների միջազգային ակադեմիայի (Փարիզ), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության և միջազգային այլ գիտական ընկերությունների անդամ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանը, մեր ժամանակների ճանաչված և մեծ հեղինակություն վայելող խոշոր մասնագետներից մեկն է:

Նրա, տաղանդավոր այս գիտնականի անցած ուղին, հայ արևելագիտական ու քաղաքագիտական մտքին, հարազատ ժողովրդի պատմությանը, նրա հոգևոր արժեքներին ու մշակույթին բոլորանվեր ծառայելու փայլուն և ուսանելի օրինակ է: Միջազգային մեծ ճանաչում ունեցող արևելագետ, արաբագետ, միջազգայնագետ և քաղաքագետ պրոֆ. Ն. Հովհաննիսյանը, որը պատկանում է հայ արևելագետների առաջին սերնդին, քառասուն տարուց ավելի է, ինչ իր շնորհաշատ գործընկերների հետ միասին, ուժ ու եռանդ չի խնայում հայ արևելագիտությունը զարգացնելու և միջազգային արևելագիտության բարձունքներին հասցնելու համար, արձանագրելով տպավորիչ նվաճումներ այդ ուղղությամբ:

Ն. Հովհաննիսյանը Արևելագիտության ինստիտուտի հիմնադիրներից և հիմնասյուներից մեկն է, որը հայ արևելագետների առաջին փառանգի հետ միասին իր ուսերի վրա է կրել նրա հիմնադրման, հայ արևելագիտության ձևավորման ու զարգացման ողջ ծանրությունը: Նա հայ արևելագիտությունը հարստացրել է մի շարք ուղղությունների ձևավորումով և զարգացումով: Նրա անվան հետ է կապված հայ արաբագիտական դպրոցի հիմնադրումը և ձևավորումը Հայաստանում:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի գրչին են պատկանում 360-ից ավելի աշխատություն, այդ թվում 30 մենագրություն, հրատարակված աշխարհի տարբեր երկրներում, տարբեր լեզուներով:

Չափազանց լայն են ու ընդգրկուն Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: 1960–1970 թթ., մոտ երկու տասնամյակ, նրա ուշադրության կենտրոնում է եղել ազգային–ազատագրական

շարժումների ուսումնասիրությունը Արաբական արևելքի երկրներում, մասնավորապես Իրաքում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլն: Դա պատմական մի ժամանակաշրջան էր, երբ Արևելքի երկրների անկախության նվաճման և ազգային սուվերեն պետությունների կազմավորման օրինաչափությունների հետազոտումը հանդիսանում էր արևելագիտության կենտրոնական խնդիրներից մեկը:

Այս բնագավառում Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են նրա հրատարակած յոթ հատորներում՝ «Սիրիական անկախ Հանրապետության կազմավորումը» (Մոսկվա, 1968, ռուսերեն), «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958)», «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում (1918-1958)» և այլն, որոնք, ըստ էության, առաջին մենագրական ուսումնասիրություններն էին ոչ միայն Հայաստանում, այլև նախկին Խորհրդային Միությունում, նվիրված այդ հույժ կարևոր հիմնախնդրին: Նրանք կարևոր ներդրում են արաբագիտության բնագավառում, որոնք լայն արձագանք են գտել և արժանացել բարձր գնահատականի տարբեր երկրների մասնագետների կողմից:

Է Ռիսը, Ն. Հովհաննիսյանի «Սիրիական անկախ Հանրապետության կազմավորումը» գրքի վերաբերյալ իր գրախոսականում, խոսելով ֆրանսիական մանդատի վերացման և անկախ սիրիական պետության ստեղծման մասին, գրում է. «Սակայն հատուկ ուսումնասիրություն, նվիրված այդ պրոբլեմներին, մինչև այժմ խորհրդային գրականության մեջ գոյություն չուներ: Ն. Հ. Հովհաննիսյանի աշխատասիրությունը հաջողությամբ լրացնում է այդ բացը» («Народы Азии и Африки», 1971, No 1):

Սոֆիայի համալսարանի պրոֆեսոր Ն. Յոնկովը, ընդգծելով, որ Ն. Հովհաննիսյանի «Սիրիական անկախ Հանրապետության կազմավորումը» գիրքը առաջացրել է բուլղարական մասնագետների մեծ հետաքրքրությունը, նշում է, որ այն մտցվել է իրենց աշխատանքային ծրագրերի մեջ և նրանից մեծապես օգտվելու են մասնագետները և ապագա արաբագետները:

Ն. Հովհաննիսյանի «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» սովորածավալ աշխատությունը 1974 թ. թարգմանվեց արաբերեն և հրատարակվեց Բեյրութում: Ինչպես նշում է արաբական հայտնի քաղաքական գործիչ և քաղաքագետ Իբրահիմ Մուստաֆան, «Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը պատմության և հասարակության վերափոխումների օրինաչափությունների հիանալի գիտակ է: Այս գիրքը, որը պարունակում է հարուստ ինֆորմացիա և տալիս է իրադարձությունների խորը վերլուծություն, շատ կարևոր է յուրաքանչյուր մարտնչող առաջադեմ հեղափոխականի համար»:

Այս և այլ աշխատությունները հայ գիտնականին բերեցին մեծ հռչակ արաբական երկրներում, Եվրոպայում և ԱՄՆ-ում: Ն. Հովհաննիսյանի այդ

աշխատությունների անմիջական ազդեցությամբ Լիբանանում, Սիրիայում և Իրաքում հայտնվեցին մի շարք ուսումնասիրություններ, որոնց հիմքում դրված են Ն. Հովհաննիսյանի հայեցակարգային դրույթները:

Ն. Հովհաննիսյանի գիտական հետազոտություններում իր արժանի տեղն է գրավում Արաբական արևելքում, իսկ ավելի լայն առումով Մերձավոր արևելքում, միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունը, որին նվիրված են մի քանի մենագրական ուսումնասիրություններ և գիտական հոդվածներ: Դրանց մեջ իր նշանակությամբ առանձնանում է 1980 թ. ռուսերեն լեզվով հրատարակված նրա “Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը Արաբական արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945)” մեծարժեք, իր բնույթով եզակի մենագրական ուսումնասիրությունը: Դա բազմապլանային աշխատություն է, որտեղ առաջին անգամ գիտական քննարկման է ենթարկվել Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ–ի, Գերմանիայի և Իտալիայի քաղաքականությունն Արաբական արևելքում: Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի այդ աշխատությունն անմիջապես իր վրա բևեռեց տարբեր երկրների արաբագետների և միջազգայնագետների ամենալայն շրջանների ուշադրությունը, որոնք բարձր գնահատեցին հայ գիտնականի աշխատությունը, համարելով այն նոր խոսք և կարևոր ներդրում Մերձավոր արևելքում միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում: Պատահական չէր, որ նրան անդրադարձան միջազգային բարձր հեղինակություն վայելող այնպիսի գիտական հանդեսներ, ինչպես “The Middle Eastern Studies” (London), “Militargeschichte” (Berlin), “Народы Азии и Африки” (Москва), “Азия и Африка сегодня” (Москва), “Новая и новейшая история” (Москва), “Вопросы истории” (Москва), “Աս–Սակաֆա ալ–Ջադիդա” (Իրաք) և այլն:

Գերմանական հայտնի միջազգայնագետ Հորստ Գիրցն իր գրախոսականում նշում է, որ “Հովհաննիսյանի հրատարակած գիրքը հանդիսանում է առանձնահատուկ ներդրում” (“Militargeschichte”, 1983, No 2): Արաբ քաղաքագետ Աբու Ղարիբի կարծիքով “Պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյանի մենագրության նշանակությունը չի սահմանափակվում աշխարհագրական այդ շրջանով: Այն օգնում է ավելի խորն ըմբռնելու երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի համաշխարհային քաղաքականությունը” (“Աս–Սակաֆա ալ–Ջադիդա”, Իրաք, 1980, No 9 (124), (արաբերեն): Այդ նույն տեսակետն է արտահայտում դոկտոր Վ. Գուսարովը (“Народы Азии и Африки”, 1981, No1):

Ռուս ականավոր արաբագետ–միջազգայնագետ, պրոֆ, Գ. Պիոլինը չթաքցնելով իր հիացմունքն այդ գրքի վերաբերյալ, գրում է. “Ես այդ գիրքը կարդացել եմ մեծագույն ուշադրությամբ և պետք է շնորհավորեմ իմ կողմից մեծապես հարգված Նիկոլայ Հովհաննիսյանին գիտական ասպարեզում

ձեռք բերած մեծ և իսկական հաղթանակի համար, իսկական հաջողության համար: Գիրքը գերազանց է թե՛ բովանդակության, թե՛ ոճական և թե՛ թեմատիկայի եզակիության առումով”:

Միշտ գտնվելով գիտական որոնումների առաջին գծում, Ն. Հովհաննիսյանն առաջիններից մեկը նկատեց և հիմնավորեց միջարաբական հարաբերությունների, որպես արաբագիտության նոր բնագավառի, ուսումնասիրության կարևորությունը: Նրա կողմից առաջ քաշված նոր տեսադրույթները և մոտեցումներն իրենց գիտական արտացոլումը գտան “Իրաքի Հանրապետության հարաբերությունները Արաբական արևելքի երկրների հետ” 1985 թ. հրատարակված մենագրության մեջ, որն իր տեսակի մեջ ցարդ մնում է իր նախադեպը չունեցող մի ուսումնասիրություն: Այդ թեմատիկան դարձավ ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի առջև կանգնած ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը, որը Ն. Հովհաննիսյանի և նրա աշակերտների կողմից ենթարկվեց համակողմանի ուսումնասիրության: Կարելի է ասել, որ այդ պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում հայ արաբագետների ներդրումը բացառիկ է:

Միջազգային հարաբերությունների պրոբլեմի ուսումնասիրությունը Ն. Հովհաննիսյանն իրականացրել է համաշխարհային ընդհանուր գործընթացների և Մերձավոր արևելքի իրողությունների ընդհանուր ֆոնի վրա, չսահմանափակվելով միայն արաբական շրջանակներով, այլ դրանք սերտորեն աղերսելով միմյանց հետ: Այդ առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա “Իրանը մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում/1979–1992/”, ինչպես նաև տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականությանը, քրդական հարցին, ԱՄՆ–ի, նախկին ԽՍՀՄ–ի և արևմտյան տերությունների քաղաքականությանը նվիրված նրա աշխատությունների շարքը:

Արաբագիտության բնագավառում Ն. Հովհաննիսյանի կարևոր ներդրումներից է արաբական երկրների անհամաչափ զարգացման տեսադրույթի առաջ քաշումը և հիմնավորումը, որը միանգամայն նոր խոսք էր այդ բնագավառում: Նա իր այդ նոր տեսադրույթը մասնագետների դատին ներկայացրեց 1986 թ. Համբուրգում կայացած Արևելագետների միջազգային XXXII կոնգրեսում, արժանանլով նրա լիակատար հավանությանը: Դա իրավունք տվեց նրան Գերմանիայում հրատարակել “Արաբական երկրների անհամաչափ զարգացումը” (Proceedings of the XXXII International Congress for Asian and North African Studies, Hamburg, 1992) ծավալով թեև ոչ մեծ, սակայն տեսական առումով խիստ կարևոր աշխատությունը, որի հարցադրումները և բացատրությունները բանալի են հանդիսանում ճիշտ հասկանալու իրադրությունը արաբական աշխարհում և արաբական երկրներին հու-

զող միասնության, համագործակցության, ներքին հակասությունների հիմնախնդիրները:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Ն. Հովհաննիսյանի աշխատությունները, նվիրված արաբական գաղափարախոսության ուսումնասիրությանը: Դա մի բարդ, իսկ եթե նկատի ունենանք արևելյան հասարակության յուրահատկությունը, ապա նաև վերին աստիճանի խճողված բնագավառ է, որը մեծ դժվարություններ է ստեղծում հետազոտողի համար: Ն. Հովհաննիսյանն այն քչերից մեկն է, որ չի ընկրկել նման բարդությունների առջև: Նրա այդ բնույթի աշխատություններից պետք է նշել արաբական սոցիալիզմի էության քննությանը, ազգային-դեմոկրատական հեղափոխությունների օինաչափությունների բացահայտմանը, արաբական երկրների զարգացման ուղիների ընտրությանը և այլ հարցերի լուսաբանությանը նվիրված աշխատությունները:

Այս թեմատիկայի հետ ուղղակի առնչություն ունեն նաև քաղաքական իսլամի հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված նրա աշխատությունների շարքը:

Իսլամի հարցը սրվեց և նրա ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջնային հռչակվեց ամբողջ նախկին Խորհրդային Միության տարածքում 1980-ական թվականներին՝ Իրանի 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո: Մոտ մեկ տասնամյակ, մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, քաղաքական իսլամի հիմնախնդիրների ուսումնասիրությունը դարձավ արևելագիտության առաջնային ուղղություններից մեկը:

Այդ ժամանակահատվածում Ն. Հովհաննիսյանի տեսադաշտում են եղել այնպիսի հանգուցային հարցեր, ինչպես իսլամի բումը, նրա ակտիվացման պատճառները և հետևանքները, իսլամի գլոբալ քաղաքականությունը և քաղաքական գլխավոր նպատակները, իսլամի փոխհարաբերակցությունը սոցիալիզմի և կապիտալիզմի տեսության հետ և այլ հարցեր: Կարևոր է նաև Ն. Հովհաննիսյանի ներդրումը “Իսլամի քաղաքականացումը և քաղաքականության իսլամացումը” տեսադրույթի առաջադրման և հիմնավորման մեջ: Այդ աշխատությունների մեծ մասը, նկատի ունենալով նրանց կարևորությունը, հրատարակվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի կողմից: Հենց այդ ինստիտուտի ղեկավարության առաջարկով, Ն. Հովհաննիսյանը, հաշվի առնելով նրա կարևոր դերակատարումն այս բնագավառում, նշանակվեց իսլամագիտական հետազոտական աշխատանքների համակարգող Հայաստանի Հանրապետությունում:

Առանձին կարևոր խումբ են կազմում հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերություններին նվիրված Ն. Հովհաննիսյանի աշխատությունները, որոնց մեջ ուշագրավ են “Լիբանանյան կոնֆլիկտը և Լիբանանի

հայ համայնքի դիրքորոշումը (1975–1982) ” և Հալեբում արաբերեն լեզվով լույս տեսած “Հայ–արաբական բարեկամական կապերը” ուսումնասիրությունները: Նրանցում բացահայտված է այն կարևոր դերը, որ հայ համայնքները խաղում են հյուրընկալ արաբական երկրների պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Հարկ է անդրադառնալ մի կարևոր բնագավառի ևս, որն ուղղակիորեն կապված է պրոֆ. Ն. Հովհաննիսյանի անվան և գիտական գործունեության հետ: Դա արաբական ժամանակակից պատմագրության մեջ հայկական հարցի և հայոց ցեղասպանության լուսաբանության ուսումնասիրությունն է, որն առանձնահատուկ նշանակություն ունի մեր պատմության համար:

Ն. Հովհաննիսյանն առաջինն էր, որ այդ հարցը դարձրեց հատուկ ուսումնասիրության առարկա: Գիտական առումով դա նորություն էր, որն ընդլայնեց հայկական հարցի և հայոց ցեղասպանության ուսումնասիրության շրջանակները և աղբյուրագիտական հիմքը: Ուսումնասիրելով եգիպտական, լիբանանյան, սիրիական և իրաքյան հեղինակների մենագրական աշխատությունները և հոդվածները, Ն. Հովհաննիսյանը հանգեց այն եզրակացության, որ այսօր արդեն ձևավորվել է արաբական հայագիտությունը, որը միանգամայն ճիշտ դիրքերից է լուսաբանում հայոց ցեղասպանությունը, այն ընկալելով որպես ոճրագործություն ոչ միայն հայերի, այլև համայն մարդկության դեմ: Այս խնդիրներին են նվիրված Ն. Հովհաննիսյանի մի շարք աշխատություններ, այդ թվում և արաբերեն լեզվով հրատարակված, որոնցից հարկ է նշել “Արաբական պատմագրությունը Հայաստանի նոր պատմության վերաբերյալ” մենագրությունը, “Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանությունը և գնահատականը արաբական ժամանակակից պատմագրության մեջ” և այլն, որոնք եզակի ուսումնասիրություններ են իրենց տեսակի մեջ:

* * *

1990–ական թվականներից, Հայաստանի անկախության նվաճումից հետո, նոր և վերին աստիճանի բարդ խնդիրներ կանգնեցին հայ արևելագիտության և անձամբ պրոֆ. Ն. Հովհաննիսյանի առջև: Այս վերջին պարագան կապված էր այն հանգամանքի հետ, որ Ն. Հովհաննիսյանը 1995 թ. գիտական անձնակազմի կողմից միաձայն ընտրվեց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն:

Ինստիտուտն այդ բարձր պաշտոնը վստահեց նրան հաշվի առնելով ոչ միայն նրա գիտական գործունեությունը և գիտական ծանրակշիռ վաստակը, այլև նրա գիտակազմակերչական մեծ ունակությունները, որ նա դրսևորել էր նախորդ տարիներին: Նա 1961 թվականից, ավել քան 40 տարի, անընդմեջ գլխավորել է ինստիտուտի Արաբական երկրների բաժինը, ստեղ-

ծելով գիտական ամենաբարդ խնդիրները լուծելու ունակ մի կոտ կոլեկտիվ: Միանգամայն օրինաչափ էր, որ 1985 թ. Երևանում կայացած Արաբագետների համամիութենական IV կոնֆերանսում ընդունած բանաձևում արձանագրվեց. “Կոնֆերանսը նշում է, որ Հայկական ԽՍՀ մայրաքաղաք Երևանում բազմիցս անցկացված արաբագետների համամիութենական կոնֆերանսները և արաբագիտական այլ խորհրդակցությունները վկայում են արաբագիտության զարգացման բարձր մակարդակի և աղբյուրագիտական բազայի ու կադրերի գոյության մասին”: Ինքնին հասկանալի է, որ հայ արաբագիտության նման բարձր գնահատականի արժանանալու գործում մեծ է Ն. Հովհաննիսյանի ներդրումը:

Ն. Հովհաննիսյանը 1984 թ. նշանակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական հարցերի գծով տեղակալ: Այդ պաշտոնում, որ նա վարեց մինչև 1995 թ., Ն. Հովհաննիսյանն իրեն դրսևորեց որպես նախաձեռնող, եռանդուն, սկզբունքային և կազմակերպչական մեծ ունակություններով օժտված ղեկավար:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանն ինստիտուտի տնօրենի պաշտոնը ստանձնեց մի այնպիսի ժամանակ, երբ իրադրությունը հանրապետությունում բարենպաստ չէր գիտության համար: Արևելագիտության ինստիտուտը, ինչպես և մյուս ինստիտուտները, խոր ճգնաժամ էր ապրում և հայտնվել էր փլուզման եզրին: Գիտական աշխատողների մեծ մասի ինստիտուտից հեռանալու պատճառով նոսրացել էին նրա շարքերը, որը բարդություններ էր ստեղծում լուրջ գիտական աշխատանքներ կատարելու առումով: Սակայն դա չփհատեցրեց Ն. Հովհաննիսյանին: Նա կարողացավ մշակել իրատեսական ծրագիր ինստիտուտը ճգնաժամից դուրս բերելու և նրա կազմալուծումը կանխելու համար: Գլխավոր խնդիրներից մեկը համարվեց հայ արևելագետների գենոֆոնդի պահպանումը և ինստիտուտի համալրումը նոր, երիտասարդ կադրերով: Շնորհիվ նրա եռանդուն, հավասարակշռված, մտածված և հեռատես քաղաքականության, հաջողվեց բեկում առաջացնել, հույս ու վստահություն ներշնչել արևելագետներին իրենց սեփական ուժերի և ապագայի նկատմամբ: Ինստիտուտը համալրվեց երեսունից ավել նոր, երիտասարդ կադրերով, որոնք այսօր իրենց ավագ ընկերների հետ միասին իրենց ուսերին տանում են արևելագիտության զարգացման ծանրությունը: Ինստիտուտ վերադարձան նրա նախկին աշխատակիցներից մի քանիսը: Այս բոլորի հետևանքով կարճ ժամանակամիջոցում լուծվեց ինստիտուտի կադրային հարցը:

Աստիճանաբար աշխուժացավ գիտական կյանքը ինստիտուտում: Ն. Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ դրամաշնորհներ ձեռք բերվեցին արտասահմանյան մի շարք հիմադրամներից, առաջին հերթին ամերիկյան “Արմեն և Բերսաբե Ջերեջյան Հիմադրամից”, ինչպես նաև Մակ-Արթուր, Վինս-

տոն, Կարնեզի հիմնադրամներից, Նիդերլանդներից, Սիրիայից և այլն: Դա հնարավորություն տվեց վերսկսել գիտական աշխատությունների՝ մենագրությունների, ժողովածուների և հոդվածների հրատարակությունը: Այժմ ինստիտուտը յուրաքանչյուր տարի հրատարակում է 15–20 մենագրություններ և ժողովածուներ, որը ամենաբարձր ցուցանիշներից մեկն է Գիտությունների ակադեմիայի համակարգում: Հաջողվեց վերսկսել «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հրատարակությունը, որը վերածվել է տարեգրքի, և արդեն լույս է տեսել քսաներկու հատոր: Ամեն տարի կազմակերպվում է երիտասարդ արևելագետների հանրապետական կոնֆերանս, որը յուրահատուկ դպրոց է նրանց համար: Ցարդ գումարվել է նման 24 կոնֆերանս: Այս ժամանակաշրջանում ինստիտուտի դիսերտացիաների պաշտպանության գիտական խորհրդում ինստիտուտի աշխատակիցները պաշտպանել են 8 դոկտորական և 17 թեկնածուական դիսերտացիաներ:

Կարելի է վստահաբար ասել, որ Արևելագիտության ինստիտուտը, հաղթահարելով ճգնաժամը, այժմ մեծ վերելք է ապրում: Նա վերականգնել է կարևոր գիտական կենտրոնի իր նախկին համբավը և բարձր հեղինակությունը: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը 2000 թ. սեպտեմբերին Մոնրեալում միաձայն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԷՍԿՕ–յի հովանու ներքո: Նրա անդամ են ընդամենը 13 երկրների արևելագիտական կենտրոններ, այդ թվում Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ–ի, Ռուսաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի և այլն: Արևելագիտության ինստիտուտն անդամ է նաև ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների Ստրատեգիական և միջազգային հարաբերությունների հետազոտական կենտրոնների միջազգային ասոցիացիայի:

Հայաստանի անկախացումից հետո ստեղծված նոր իրադրությունը պահանջում էր նորովի մոտենալ և վերաիմաստավորել հայ արևելագիտության խնդիրները և ուղղությունները: Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի ծառայություններից մեկն էլ այն է, որ նա կարողացավ հստակորեն սահմանել ու հիմնավորել դրան վերաբերող նոր տեսադրույթները.

Առաջին, հայ արևելագիտությունը, որը նախկինում խորհրդային արևելագիտության բաղկացուցիչ մասն էր կազմում, Խորհրդային Միության փլուզումից հետո դարձել է ազգային գիտություն, կազմելով համաշխարհային արևելագիտության բաղկացուցիչ մասը:

Երկրորդ, հայ արևելագիտությունը Հայաստանի Հանրապետության համար ստրատեգիական նշանակություն ունեցող գիտություն է:

Երրորդ, արևելագիտությունը Հայաստանի Հանրապետության համար կիրառական նշանակություն ունեցող գիտություն է, որի արդյունքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման տեսանկյունից:

Ղեկավարվելով այս նոր տեսադրույթներով, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը նախաձեռնեց և ինստիտուտի կազմում ստեղծեց «Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հետ» գիտահետազոտական թեմատիկ խումբը, որը հենց ինքն էլ գլխավորեց:

Դրան հաջորդեց մյուս ոչ պակաս կարևոր քայլը, որը դարձյալ նորություն էր: Իր ձևավորման օրից հայ արևելագիտության ուսումնասիրության դաշտը սահմանափակված էր Մերձավոր և Միջին Արևելքով, այդ տարածաշրջանի երկրների պատմության, քաղաքականության, սոցիալտնտեսական և մշակութային հարցերի ուսումնասիրությամբ: Հայաստանի անկախացումից հետո անհրաժեշտ դարձավ ընդլայնել հայ արևելագիտության ուսումնասիրությունների ոլորտը, նրա մեջ ներառնելով նաև Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիայի տարածաշրջանը: Այդ էին պահանջում Հայաստանի պետական, աշխարհաքաղաքական և տնտեսական շահերը: Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, ՀՀ Արտաքին գործերի նախարարության և ՀՀ ԳԱԱ Նախագահության աջակցությամբ, ՀՀ Կառավարությունը 2003 թ. որոշում ընդունեց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիայի բաժին, որի հիմնական խնդիրներից է Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի պատմության ու քաղաքականության, Հայաստանի հետ նրանց միջպետական հարաբերությունների ուսումնասիրությունը: Դրա շնորհիվ հայ արևելագիտությունը դարձավ ավելի ամբողջական: Այժմ հայ արևելագիտության դաշտը, պրոֆ. Ն. Հովհաննիսյանի դիպուկ բնութագրմամբ, «ձգվում է Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս»:

Նոր ժամանակները նոր խնդիրներ առաջադրեցին և դրա հետ կապված վերափոխվեց ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան: Նա իր բնույթով արդիական է և միավորում է դասական արևելագիտությունը Արևելքի ժամանակակից հիմնախնդիրների ուսումնասիրության հետ, կազմելով մեկ ամբողջություն:

Այդ փոփոխությունները թեմատիկ առումով իրենց արտացոլումը գտան նաև Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում:

Ելնելով անկախ Հայաստանի առջև կանգնած խնդիրներից, նա սկսեց զբաղվել արտաքին քաղաքականության այնպիսի հանգուցային հարցերի ուսումնասիրությամբ, ինչպես Հայաստանի դիվանագիտությունը և արտա-

քին քաղաքականության հիմնական ուղղությունները, Անդրկովկասյան–մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը, Հայաստանը որպես միջազգային հարաբերությունների գործոն, նրա հարաբերությունները հարևան երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի, ինչպես նաև Ռուսաստանի. ԱՄՆ–ի և Արևմտյան Եվրոպայի երկրների հետ և այլն:

Ինքնին հասկանալի է, որ նման հիմնախնդիրներ առաջին անգամ էին դառնում ուսումնասիրության առարկա: Նրանք նորություն էին, որոնցով երբեք չէր զբաղվել հայ պատմագիտական միտքը: Այդ ուղղությամբ Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են նրա մի շարք մենագրական աշխատություններում, որոնցից պետք է առանձնացնել “Դիվանագիտություն. Ֆունկցիաները. Մարմինները. Ծառայողները”, “Հայաստանի արտաքին քաղաքականությունը” գրված անգլերեն լեզվով (“The Foreign Policy of Armenia”) ԱՄՆ–ում հրատարակված “Հայաստանի Հանրապետություն. Քաղաքականություն և դիվանագիտություն”/“Republic of Armenia. Policy and Diplomacy”), դարձյալ անգլերեն լեզվով Հայաստանում և Կանադայում հրատարակված “Անդրկովկասյան–մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը” (“Formation of the Transcaucasian–Middle Eastern Geopolitical Region”) և այլն:

Այս աշխատություններն իրենց նպաստն ունեցան հայ դիվանագետների մասնագիտական պատրաստման մեջ և Հայաստանի արտաքին քաղաքականության մի շարք կարևոր խնդիրների պարզաբանման և լուծման ուղիների որոնման գործում:

Ն. Հովհաննիսյանն իր որոշակի ներդրումն ունի էթնոքաղաքական կոնֆլիկտների, առաջին հերթին Ղարաբաղյան կոնֆլիկտի, ուսումնասիրության և լուսաբանության բնագավառում, առաջ քաշելով ինքնատիպ ու համարձակ լուծումներ և ոչ ստանդարդ մոտեցումներ: Այդ հիմնադիսնորին նվիրված նրա աշխատությունները հրատարակվել են բացի Երևանից նաև Մերիլենդում (ԱՄՆ), Մոսկվայում, Վենետիկում և այլուր: Դրանց մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի 1997 թ. Մերիլենդի համալսարանի կողմից հրատարակված “Էթնոքաղաքակաան կոնֆլիկտները Անդրկովկասում. Նրանց արմատները և լուծումները” (“Ethnopolitical Conflicts in Transcaucasus: Their Roots and Solutions”) կոլեկտիվ մենագրությունը: Նրա հեղինակներն էին, Ն. Հովհաննիսյանի հետ միասին, նաև քաղաքագետներ Ադրբեջանից, Վրաստանից, Աբխազիայից, Հարավային Օսեթիայից և Լեռնային Ղարաբաղից, որն արդյունք էր Մերիլենդի համալսարանում նրանց համատեղ աշխատանքի:

Ղարաբաղյան պրոբլեմին նվիրված շարքից պետք է նշել նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով հրատարակված Ն. Հովհաննիսյանի «Ղարաբաղյան հիմնախնդիրը. Գործոններ. Չափանիշներ. Լուծման տարբերակներ» («The Karabakh Problem. Factors. Criteria. Variants of Solution») ինքնատիպ մենագրական ուսումնասիրությունը:

Վերջին շրջանում պրոֆ. Ն. Հովհաննիսյանը կրկին անդրադարձավ հայոց ցեղասպանության հարցերին և 2002 թ. գիտական հասարակայնությանը ներկայացրեց միանգամից երկու արժեքավոր աշխատություն՝ «Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում» գրքույկը և անգլերեն լեզվով «Հայոց ցեղասպանությունը. Հայասպանություն» («The Armenian Genocide. Armenocide») մենագրությունը: Նա այդ հարցը քննարկում է գիտական նոր ուղղության՝ ցեղասպանագիտության լույսի ներքո, որը նոր հեռանկարներ է բացում հայոց ցեղասպանության շատ հարցեր նորովի լուսաբանելու առումով: Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը տալիս է ցեղասպանագիտության իր սահմանումը և նրա հիմնարար դրույթները: Այդ դիրքերից քննության առնելով խնդիրը, նա, արդեն նոր գիտական ուղղության հիմնադրույթների հիման վրա, գալիս է այն համոզիչ եզրակացության, որ այն, ինչ պատահեց հայության հետ 1915 թ., ոչ այլ ինչ է, քան ցեղասպանություն:

Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն. Հայասպանություն» մենագրությունը հայոց պետականության վերականգնման նորագույն ժամանակաշրջանում՝ 1918–2002 թթ., Հայաստանում երբևիցե օտար լեզվով հրատարակված առաջին աշխատությունն է, որով լայնորեն շրջանառության մեջ մտավ «Հայասպանություն» եզրը: Նա հասցեագրված է օտար ընթերցողին, համաշխարհային հասարակայնությանը, և այդ առումով դժվար է գերազնահատել նրա պատմագիտական և քաղաքական նշանակությունը:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի XX դարի վերջերին– XXI դարի սկզբներին հրատարակած աշխատություններն առաջացրին մասնագետների, քաղաքական և պետական գործիչների աննախադեպ հետաքրքրությունը: Նրանք ձգտում էին դրանցում գտնել իրենց հուզող շատ հարցերի պատասխանները, փորձում էին հասկանալ Հայաստանում, Անդրկովկասում և հարակից տարածքներում տեղի ունեցող նոր իրողությունները, զարգացման հեռանկարները և առաջացած բազմաթիվ ու տարատեսակ խնդիրների բնույթն ու նրանց լուծման ուղիները:

Նրանց ուշադրության կենտրոնում հայտնվեց Ն. Հովհաննիսյանի «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» աշխատությունը, որի նկատմամբ իրենց հետաքրքրությունը ցուցաբերեցին նախ և առաջ ԱՄՆ–ի

նախկին պետական քարտուղար Ջեյմս Բեյքերը և Հյուստոնի նրա անունը կրող Քաղաքականության ինստիտուտի տնօրեն Էդվարդ Ջերեջյանը:

Այդ գրքի կարևորությունն ընդգծեց ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Ջիմմի Կարտերի Ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական, այժմ ԱՄՆ-ի Ստրատեգիական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի պրոֆեսոր Ջրիգնել Բժեժինսկին: Հեղինակին ուղարկված նամակում նա, նրա այդ գրքի վերաբերյալ նշում է. “Դա վերաբերում է մի թեմայի, որի վերաբերյալ ես կարիք ունեմ ավելի շատ բան սովորելու: Դատելով Թբիլիսիում մեր ունեցած զրույցներից, ես հավատացած եմ, որ ես շատ օգուտ կքաղեմ”: (Չ. Բժեժինսկին ակնարկում է 1999 թ. Թբիլիսիում Ն. Հովհաննիսյանի հետ իրենց հանդիպման և երկարատև ու հանգամանալի զրույցների մասին Հայաստանի, Անդրկովկասի, Լեռնային Ղարաբաղի և ռեգիոնալ ու միջազգային քաղաքականության տարբեր հարցերի վերաբերյալ):

Մասնագետների բուռն հետաքրքրությունն առաջացրին նաև Ն. Հովհաննիսյանի անգլերեն լեզվով հրատարակած մյուս երկու աշխատությունները՝ “Ղարաբաղի պրոբլեմը” և “Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը”: Բազմաթիվ կարծիքներից նշենք պատերազմի, խաղաղության և զինաթափման հարցերով աշխարհի լավագույն մասնագետներից մեկի, Էդինբուրգի համալսարանի Պաշտպանական ուսումնասիրությունների ամբիոնի վարիչ, Բրիտանական ակադեմիայի ասոցացված անդամ, պրոֆեսոր Ջոն Էրիկսոնի կարծիքը: Ահա թե ինչ է գրել նա 2000 թ. սեպտեմբերի 18-ին հեղինակին ուղղված նամակում. “Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Ես խորապես երախտապարտ եմ ձեզ “Ղարաբաղի պրոբլեմը: Գործոններ. Չափանիշներ, Լուծման տարբերակներ” և “Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը” գրքերն ինձ ուղարկելու համար:

Դրանք շատ ինքնատիպ, վերին աստճանի կարևոր և մեծ ինֆորմացիա պարունակող մենագրություններ են, որոնք ես կարդացի՝ մեծ օգուտ քաղելով ինձ համար, և որտեղից ես ձեռք բերեցի թարմ տեսակետներ գեոպոլիտիկայի զանազան ասպեկտների մասին, որոնց վերաբերյալ ես կարիք ունեի հետագա այնպիսի մասնագիտական ղեկավարության, ինչպիսին ձերն է: Այսպիսին է իմ տպավորությունը ձեր ուսումնասիրությունների կարևորության վերաբերյալ, և ես ծանոթացրի իմ ավագ կոլլեգաներին Լոնդոնում ձեր աշխատության և հայտնագործությունների հետ: Շատ մոտ ապագայում ես հույս ունեմ կազմակերպել հատուկ քննարկում Էդինբուրգի համալսարանում իմ գործընկերների հետ: Կրկին անգամ իմ ամենաանկեղծ շնորհակալությունները ձեզ, որ այնքան բարի գտնվեցիք ձեր անգնահատելի մենագրություններն ինձ ուղարկելու համար”:

Ն. Հովհաննիսյանի «Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը» աշխատությունում քննարկվող հարցերի և հեղինակի տեսակետների մասին բարձր կարծիք է հայտնել նաև պրոֆ. Չ. Բժեժինսկին: Ահա թե ինչ է նա գրում. «Շնորհակալություն Անդրկովկասյան ռեգիոնի անվտանգության պրոբլեմների վերաբերյալ ձեր հետաքրքիր մտքերն ինձ հետ կիսելու համար: Ինձ հատկապես հետաքրքրեցին ձեր նկատառումները տարածաշրջանում հնարավոր «Անվտանգության պակտի» վերաբերյալ և ինձ թվում է, որ հարավ-արևելյան Եվրոպայի նախադեպի օգտագործումը շատ կառուցողական միտք է»:

Ն. Հովհաննիսյանին հաճախ էին արտասահմանյան գիտական կենտրոնները հրավիրում համատեղ աշխատանքի: Այսպես, օրինակ, նա Երուսաղեմի համալսարանի Հարրի Տրումենի Խաղաղության ինստիտուտի հրավերով և Հորդանանի Արքայական գիտահետազոտական կենտրոնի մասնակցությամբ, աշխատել է «Նոր աշխարհաքաղաքական մակրոռեգիոն-Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի վրա, իսկ Հյուստոնի, Տեխաս, Ջեյմս Բեյքերի անվան Քաղաքականության ինստիտուտի պատվերով գրեց հատուկ աշխատություն Ղարաբաղյան հարցի առաջացման, բնույթի, լուծման ուղիների ու տարբերակների և տարբեր երկրների դիրքորոշման մասին, որը կազմում էր այդ ինստիտուտի Կասպից ծովի ավազանին նվիրված ուսումնասիրությունների բաղկացուցիչ մասը: Նրա ներկայացրած հարցադրումները, տեսակետները և առաջարկությունները գոհունակությամբ ընդունվեցին ԱՄՆ-ի այդ ամենահեղինակավոր ինստիտուտի կողմից, ինստիտուտ, որի տեսակետներին և ծրագրերին ականջալուր են ԱՄՆ-ի իշխանական ամենավերին մարմինները: Ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Է. Ջերեջյանն իր երախտագիտությունը հայտնելով հեղինակին, նշում է. «Թանկագին պրոֆեսոր Հովհաննիսյան: Ես ցանկանում եմ ընդգծել ձեր ուշադրության արժանի աջակցությունը մեր Կասպիական ուսումնասիրություններին»:

Հարկ է նշել նաև այն հետաքրքրությունը, որ ցուցաբերվում է ՆԱՏՕ-ի վերաբերյալ Ն. Հովհաննիսյանի տեսակետների նկատմամբ: Այդ առումով հատկապես ուշադրության է արժանի Ռուսաստանի Պետական դումայի օրգան «Պառլամենտական թերթի» («Парламентская газета», 23.XI.2002) մոտեցումը: Նա ուշագրավ է համարում Ն. Հովհաննիսյանի կարծիքին առ այն, որ Հայաստանին անհրաժեշտ է խորացնել իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ, որ ի տարբերություն Ադրբեյջանի և Վրաստանի, «Հայաստանը ՆԱՏՕ-ն չի հակադրում Ռուսաստանին, այլ, ընդհակառակը, վարում է փոխլրացման քաղաքականություն», որ որոշ իմաստով Հայաստանը «կապող օղակ է ՆԱՏՕ-ի և ՌԳ-ի միջև» և որ «Հայաստանի կողմից կիրառվող փոխլրացման քաղաքականությունը հարաբերությունների նոր տեսակ է, որն առաջին անգամ հաջողվեց կիրառել կյանքում և պրակտիկայում: Եվ



88855

Ռուսաստանը, և ՆԱՏՕ-ն հասկացողությամբ են մոտենում Երևանի կողմից կիրառվող քաղաքականությանը”:

Կարծում ենք այսքանն էլ բավարար է ցույց տալու, թե ինչպիսի բարձր հեղինակություն վայելող գիտնական է պրոֆ. Ն. Հովհաննիսյանը, որի աշխատությունները, տեսակետները և մոտեցումները զգալի և բարերար ներգործություն ունեն ժամանակակից արևելագիտության և քաղաքագիտության արդիական խնդիրների ուսումնասիրությունների վրա:

Պարբերաբար նոր, թարմ մտքեր, տեսակետներ, գազափարներ արտահայտելու և ոչ ստանդարդ մոտեցումներ ցուցաբերելու համար, պրոֆ. Ն. Հովհաննիսյանին մասնագիտական շրջանակներում անվանում են ”Նոր մտքերի զենեքատոր”:

* * *

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը դասախոսություններ է կարդացել ու գիտական զեկուցումներով հանդես եկել տարբեր երկրների համալսարանների և գիտական կենտրոնների հրավերով, այդ թվում Բաղդադի, Բեյրութի, Դամասկոսի, Հալեբի, Լոնդոնի, Օքսֆորդի, Ջորջ Վաշինգտոնի, Ջորջթաունի, Կալիֆոռնիայի (Լոս Անջելեսի, Բերկլիի, Ֆրեզնոյի/) ԱՆՆ Արբորի, Նյու Մեքսիկոյի և այլ համալսարաններում, Կահիրեի “Ալ-Ահրամ” Ստրատեգիական կենտրոնում, Լոնդոնի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում և այլն: Մասնակցել է Ասիական և Հյուսիսաֆրիկյան (արևելագիտական / XXXII (Համբուրգ, 1986), XXXV (Բուդապեշտ, 1997) XXXVI (Մոնրեալ, 2000) և այլ միջազգային կոնգրեսներին:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը Սիրիայի բարձրագույն կրթության նախարարության հրավերով գիտահետազոտական աշխատանք է կատարել Դամասկոսի և Հալեբի համալսարաններում (1985 թ.), Բրիտանական ակադեմիայի հրավերով՝ Լոնդոնի և Էդինբուրգի համալսարաններում (1989 թ), շահելով Ֆուլբրայթի մրցույթում, 1993–1994 թթ., ավելի քան մեկ տարի գիտահետազոտական աշխատանք է կատարել Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, աշխատելով “ԱՄՆ-ի քաղաքականությունը Արաբական արևելքում” թեմայի վրա: Իսկ 1995 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին, Մերիլենդի համալսարանի հրավերով, աշխատել է այդ նույն համալսարանի Միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման կենտրոնում:

Ն. Հովհաննիսյանը, որպես ճանաչված մասնագետ, բազմիցս հրավիրվել է, ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրների պետական մարմինների կողմից խորհրդակցության զանազան հարցերի վերաբերյալ նրա կարծիքն իմանալու նպատակով:

1998 թ. փետրվարին նա ԱՄՆ-ի Սենատի ղեկավարության կողմից պաշտոնական հրավեր է ստանում որպես հայկական տեսակետը ներկա-

յացնող փորձագետ և զեկուցող, մասնակցելու Սենատի Միջազգային հարաբերությունների կոմիտեի Եվրոպական գործերի Ենթակոմիտեի և Մերձավորարևելյան ու Հարավարևելյան Ասիայի Ենթակոմիտեի համատեղ լսումներին, որտեղ քննարկվելու էին Հարավային Կովկասում գոյություն ունեցող կոնֆլիկտների առաջացման և նրանց հնարավոր լուծումների, Հարավային Կովկասի պետությունների անկախության, սուվերենության և տնտեսական զարգացման վրա այդ կոնֆլիկտների ազդեցության հարցերը, ինչպես նաև այն հարցը, թե ինչու Միացյալ Նահանգների համար կարևոր է աջակցել այդ կոնֆլիկտների լուծմանը: “Մենք հույս ունենք, –ասված էր հրավերում, – որ դուք կլուսաբանեք վերևում բարձրացված որոշ խնդիրներ, ինչպես նաև կներկայացնեք ձեր տեսակետները տարածաշրջանում առկա ապակայունացնող գործոնների, եթե այդպիսիները կան, կայուն խաղաղության հեռանկարների վերաբերյալ, և այն մասին, թե ինչպիսի ավելի լավ քաղաքականության պետք է հետևեն Միացյալ Նահանգները՝ այդ նպատակներին հասնելու համար”:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը մի քանի անգամ հրավիրվել է ԱՄՆ–ի պետական դեպարտամենտ, որտեղ նրա հետ քննարկվել են Հայաստանի արտաքին քաղաքականության, դարաբաղյան խնդրի, տարածաշրջանային և այլ հարցեր, մեծ նշանակություն տալով նրա լավատեղյակությանը, հարցերի լուծման ոչ ստանդարտ մոտեցումներին և վերլուծական կարողություններին: Ահա դրանցից մեկը, թվագրված 1995 թ. սեպտեմբերի 22–ին: “Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտ: Հարգելի Դ–ր Հովհաննիսյան. Հրավիրում ենք ձեզ մասնակցելու Անդրկովկասին և Կենտրոնական Ասիային նվիրված աշխատանքային քննարկմանը Պետական դեպարտամենտի “Դեմոկրատացումը և քաղաքական մասնակցությունը հետկոմունիստական հասարակություններում” ծրագրի շրջանակներում”:

Նրա հետ խորհրդակցելու և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ նրա կարծիքն ու կանխատեսումներն իմանալու նպատակով, 2002 թ. փետրվարին պրոֆ. Ն. Հովհաննիսյանը Լոնդոն հրավիրվեց Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարության կողմից, որտեղ նա հանդիպումների մի անբողջ շարք ունեցավ Ֆորին Օֆիսի համապատասխան պատասխանատուների հետ:

Այս բոլորից հետո բնավ պատահական չէ այն բարձր կարծիքը, որ տարբեր առիթներով Ն. Հովհաննիսյանի մասին արտահայտել են տարբեր երկրների գիտնականները և քաղաքական գործիչները: Նշենք դրանցից երկուսը:

Առաջինը պատկանում է ԱՄՆ–ի Պաշտպանական ինֆորմացիայի կենտրոնի տնօրեն, փոխ–ծովակալ Եվգենի Զերրովին: Այդ խիստ հեղինակավոր Կենտրոնը անհրաժեշտ վերլուծական և այլ նյութեր է պատրաստում

ԱՄՆ-ի կոնգրեսի և գործադիր բարձրագույն իշխանությունների համար: Ահա թե ինչ է գրում փոխ-ծովակալը պրոֆ. Ն. Հովհաննիսյանի մասին. “Նա մարդկային մի անհատականություն է, օժտված Միացյալ Նահանգների հատկապես քաղաքական և սոցիալական խնդիրների ուժեղ հասկացողությամբ, և կարող է ներդնել փորձ և իմաստություն մեր երկու ազգերին վերաբերող կարևոր խնդիրների ուսումնասիրության մեջ”:

Մյուս կարծիքի հեղինակն է ԱՄՆ-ի Մերիլենդի և Նյու Մեքսիկոյի համալսարանների պրոֆեսոր Բարրի Սանդերսը: Նա գտնում է, որ Ն. Հովհաննիսյանը “գիտական և քաղաքական վերլուծաբան է և նրա վերլուծությունները Անդրկովկասի քաղաքական, տնտեսական հիմնախնդիրները գերազանց հասկանալու արտահայտություն են: Նրա տեղեկությունները և իր նոր հարևանների, Մերձավոր արևելքի և Միացյալ Նահանգների հետ Ռուսաստանի հարաբերությունների ըմբռնումը՝ ամենաարժեքավոր ռեսուրսն են մեր ազգի համար: Մերիլենդում գտնվելու ընթացքում դուրսը Հովհաննիսյանը կողմնակի մարդ չէր Վաշինգտոնի համար: Նա իշխանությունների հետ խոսում էր նախկին ԽՍՀՄ-ի նոր անկախ պետությունների խաղաղարար ջանքերի մասին, և մի քանի քաղաքական շրջանակների կողմից գրույցի է հրավիրվել նրանց իր տեսակետները ներկայացնելու համար”: Եվ, վերջապես, ամերիկյան պրոֆեսորը գտնում է, որ “Նա արտակարգ անձնավորություն է, զինված այնպիսի գիտելիքներով, որոնք շատ կարևոր են մեր արտաքին քաղաքականության ձևավորման համար այնպիսի հարցում, ինչպես հարաբերությունները նախկին Խորհրդային Միության հետ: Մշտական շփումները նրա հետ կարող են ավելացնել ինֆորմացիան, որն անհրաժեշտ է, որպեսզի մենք ընդունենք իմաստուն, հավասարակշռված որոշումներ Մերձավոր արևելքում և Կովկասում մեր քաղաքականության վերաբերյալ”:

Նշանակալի է Ն. Հ. Հովհաննիսյանի ներդրումը արևելագիտական կադրերի պատրաստման բնագավառում, որը մշտապես գտնվում է նրա ուշադրության կենտրոնում: Նրա գիտական ղեկավարությամբ դուրսորդական և թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել մոտ երեսուն արևելագետներ, այդ թվում Լիբանանից, Սիրիայից, Հորդանանից և այլ երկրներից:

Նա ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և “Ընդհանուր պատմություն” մասնագիտության գծով դուրսորդական ատենախոսությունների պաշտպանության խորհրդի նախագահն է, Հայկական Հանրագիտարանի Խորհրդի, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի, ՀՀ ԳԱԱ “Լրաբեր հասարակական գիտությունների” խմբագրական խորհրդի և այլ խորհուրդների անդամ:

Նա ականավոր հասարակական գործիչ է. եղել է Արաբական երկրների հետ բարեկամության Խորհրդային ասոցիացիայի վիցե պրեզիդենտ, Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ համերաշխության Խորհրդային կոմիտեի, Արտասահմանյան երկրների հետ խորհրդային ընկերությունների Միության Խորհրդի անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի Հայկական ընկերության նախագահության ու բյուրոյի անդամ, և այլն:

Նա Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոնի հիմնադիր տնօրենն է և Հայ ատլանտյան ասոցիացիայի համանախագահը:

Պարգևատրված է Մովսես Խորենացու մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի անվան Հուշամեդալով և այլ պարգևներով: 2003 թ. նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության “Գիտության վաստակավոր գործչի” կոչում:

*Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտ*

НИКОЛАЙ ОГАНЕСОВИЧ ОГАНЕСЯН

Директор Института востоковедения национальной академии наук Армении, доктор исторических наук, профессор, Заслуженный деятель науки, член академии наук Нью Йорка, Международной академии наук по проблемам национальной безопасности (Москва), Международной академии наук "Арарат" (Париж), Сирийского общества истории арабской науки и других международных научных обществ, Николай Оганесович Оганесян один из признанных и пользующихся большим авторитетом крупных специалистов наших дней

Путь, пройденный этим талантливым ученым, является блестящим и поучительным примером служения востоковедческой науке, истории родного народа, его духовным ценностям и культуре. Проф. Н. Оганесян — ученый — востоковед, арабист, историк — международник и политолог, имеющий широкое международное признание. Он принадлежит к первому поколению армянских востоковедов, который более сорока лет, совместно со своими коллегами, не щадит силы и энергии для развития армянского востоковедения и поднятия его до высот международного уровня и добился в этом впечатляющих успехов.

Н. Оганесян один из основоположников и столпов Института востоковедения АН Армении, который вместе с первой плеядой армянских востоковедов нес на своих плечах всю тяжесть основания, формирования и развития армянского востоковедения. Он обогатил армянское востоковедение новыми направлениями.

Перу Н. Оганесяна принадлежат более 360 научных трудов, в том числе 30 монографий, изданных в различных странах мира, на различных языках.

Очень широк и разнообразен круг научных интересов проф. Н. Оганесяна. В 1960—1970 гг., почти два десятилетия, в центре его научных интересов находилось изучение национально-освободительных движений в странах Арабского Востока, в частности в Ираке, Сирии, Ливане, Египте. Это был период, когда изучение закономерностей завоевания независимости и формирования суверенных государств народами Востока, являлось одним из приоритетных направлений в востоковедении.

